

ԻՊԱՍ Զեկույց .ԸՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



Երևան, 2021թ.



Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. Հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ, թիվ 2020-0183 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամ կազմակերպության տեսակետների հետ:

Սույն զեկույցի հեղինակներն են՝ Հասմիկ Հարությունյանը, Աննա Մելիքյանը:

Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել են՝ Վանատուր Շերենցը, Լիլիթ Գալստյանը, Կարինա Ավանեսյանը, Էվելինա Հակոբյանը, Արմինե Հակոբյանը:

Բովանդակություն

I. Ընդհանուր տեղեկություններ 5

II. Վարչարարության խնդիրներ 17

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 29

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ ոստիկանության դեմ բերված հայցերի առնչությամբ վարույթ ընդունված գործերի ուսումնասիրություն, որի նպատակներից մեկն է վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության համակարգային խնդիրներ՝ ոստիկանության իրավասություններից և լիազորություններից բխող տարաբնույթ իրավական հարցերի առնչությամբ: Մասնավորապես վերլուծվել են 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված 90 վճիռներից 80-ը¹, ինչպես նաև 56 կարճման որոշումներից 28-ը:

Մինչ ուսումնասիրության արդյունքների վերջնականացումը տեղի է ունեցել նաև հանդիպում-քննարկում ՀՀ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ: Քննարկման ընթացքում կազմակերպությունը ներկայացրել է վեր հանված հիմնական արդյունքները ըստ ոլորտների ու խնդիրների, որոնց կապակցությամբ ստացվել են Ոստիկանության մեկնաբանությունները:

Ուսումնասիրության վերջնական արդյունքները, ներառելով նաև ՀՀ Ոստիկանության մեկնաբանություններն ու առաջարկները, հակիրճ ամփոփված են սույն զեկույցի մեջ:

Այն ներկայացնում է ինչպես դատական գործերի վերաբերյալ ընդհանուր թվային վիճակագրություն, այնպես էլ վեճերից բխող դատաիրավական ու վարչարարության խնդիրներն ու բովանդակային այլ հարցերը:

¹ Դատալեքս տեղեկատվական համակարգի միջոցով դուրս բերված և իրականում ուսումնասիրված գործերի քանակի տարբերությունները կարող են պայմանավորված լինել գործերի մեծ քանակությամբ, ինչպես նաև Կազմակերպության կողմից 2019-2020թ. այլ ուսումնասիրության ընթացքում արդեն իսկ դիտարկված լինելը:


I. Ընդհանուր տեղեկություններ

Դիտարկված 80 գործերը վերաբերել են հետևյալ հարցերին.

- 25 գործով վարույթ՝ ներխուժումը վերացնելու հարցով,
- 20 գործով վարույթ՝ կացության կարգավիճակ տրամադրելու խնդրով,
- 5 գործով վարույթ՝ ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու խնդրով,
- 5 գործով վարույթ՝ աշխատանքից հեռացման հարցով,
- 4 գործով վարույթ՝ հասարակական վայրերի օգտագործման կանոնները խախտելու հարցով,
- 4 գործով վարույթ՝ ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման հարցով և այլն:

Առանձին վարույթներ ծագել են նաև վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման, թոշակի ձևակերպման, տեղեկատվության տրամադրման, մեքենա վարելիս անվտանգության ամրագոտին չկապելու և երթեւեկության կանոնները խախտելու, դիտավորությամբ գույքի վնասման, պատմամշակութային հուշարձանների պահպանության կանոնները խախտելու և տուն մուտք գործելու խոչընդոտների իրավահարաբերություններից ծագած խնդիրների հիմքով:

80 գործով կայացված վճիռներից 53-ի պարագայում վճռով հայցը մերժվել է, ամբողջությամբ բավարարվել է 25 վճռով, 2 դեպքում բավարարվել է մասնակի:




Ուսումնասիրված դատական գործերի շրջանակներում բարձրացվել են տարբեր իրավունքների խախտման հարցեր: Գերակշիռ թիվ է կազմել սեփականության իրավունքի հարցը, որը բարձրացվել է 50 վարույթներով: 6 գործ առնչվել է լսված լինելու իրավունքին: 6 գործով խնդիրը վերաբերել է տեղեկատվության ազատության իրավունքին, 5 գործով՝ հավաքների ազատության իրավունքին:

Ուսումնասիրված դատական գործերի 75-ի պարագայում հայցվորները հանդիսացել են ֆիզիկական անձիք, որից 19-ը՝ օտարերկրացիներ: 2-ական գործով հայցվորը հանդիսացել է առևտրային կազմակերպություն և անհատ ձեռնարկատեր:

2 գործով ՀՀ ոստիկանության հետ մեկտեղ պատասխանող կողմ հանդիսացել են Ազգային անվտանգության ծառայությունն ու Ֆինանսների նախարարությունը:

Գործերի գերակշիռ մասում հայցվորները հանդես են եկել ներկայացուցչի միջոցով / 58 դեպքում/: Մնացած 22 վարույթներով հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել կամ ներկայացված է եղել իրավաբանական անձի տնօրենի կողմից:

Ուսումնասիրված դատական գործերից 42-ի դեպքում հայցվորը կամ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել է դատավարությանը, 35 գործով մասնակցություն չի ապահովել, իսկ 3 դեպքում մասնակցության մասին նշում վճռում առկա չէ: Ընդ որում, 35 դեպքից 13-ի պարագայում հայցվորները հանդիսացել են օտարերկրացիներ:



3 գործով օտարերկրացի հայցվորների պարագայում առաջացել է թարգմանչի անհրաժեշտություն: Չնայած 1 գործով հայցվորները եղել են Ռուսաստանի դաշնության քաղաքացիներ, սակայն լինելով ազգությամբ հայ, հայերենին տիրապետել են, սակայն այնուհանդերձ գրագետ թարգմանության համար թարգմանիչ ապահովված չի եղել: Մեկ այլ դատական գործով հայցվորը ունեցել է թարգմանության կարիք, սակայն մինչև դատարան դիմելը լսումների ընթացքում հայցվորի կինն է հանդիսացել վերջինիս թարգմանիչը:

Մյուս դեպքում հայցվորը հանդիսացել է Ավստրալիայի քաղաքացի և չի տիրապետել հայերենին: Հայցվորի պնդումների համաձայն՝ *Ոստիկանության Երևան քաղաքի Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի որոշման հիման վրա հրավիրված թարգման Դ. Բ-ն բավարար անգլերեն լեզվի իմացությամբ օժտված չի եղել և թարգմանությունները իրականացրել է ինտերնետային թարգմանության ծրագրի միջոցով, հետևաբար հայցվորի*

փաստարկները չի կարողացել թարգմանել և պատշաճ կերպով ներկայացնել ոստիկանությանը և հակառակը²:

Ոստիկանության դեմ ներկայացված հայցերով ուսումնասիրված գործերից մեծամասնությամբ ոստիկանությունը՝ որպես պատասխանող կողմ ներկայացուցիչների միջոցով ապահովել է մասնակցությունը դատավարությանը: Մասնավորապես, մասնակցություն արձանագրվել է 62 դատական գործով: 15 գործով ոստիկանությունը մասնակցություն որևէ կերպ չի ապահովել, 3 գործի վերաբերյալ տեղեկություն որոշումներից հասանելի չի եղել:

21 գործով արձանագրվել է ներկայացված հայցադիմումի վերադարձ: Ընդ որում, մեկից ավելի անգամ վերադարձ եղել է միայն մեկ դեպքում / հայցվորները ունեցել են ներկայացուցիչ փաստաբան/³:

10 գործով հայցադիմումը վերադարձվել է անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու հիմքով: Մասնավորապես, որպես այդպիսիք հանդիսացել են՝

- հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողի և երրորդ անձանց կողմից Վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան ստանալը հավաստող փաստաթղթերի բացակայությունը, կամ ապացույց առ այն, որ պատասխանողի կամ դատավարության մասնակիցների բնակության/գտնվելու վայրով հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենների հանձնումն անհնարին է եղել /մեկից ավելի գործերով/,
- բացթողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն չներկայացնելը,
- պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բացակայությունը /մեկից ավելի գործերով/,
- Լիազորագիր կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է ներկայացուցչի լիազորությունը, չներկայացնելը:

Նշված բոլոր դեպքերում հայցվորները վերացրել են սխալներն ու կրկին հայցադիմում ներկայացրել՝ կցելով նաև անհրաժեշտ փաստաթղթերը:

Մեկ դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդությունը մերժվել է, հայցվորը դիմել է վերաքննիչ դատարան, բողոքարկելով վերադարձի որոշումը: Կրկին ներկայացրել է հայցը, սակայն դատարանը մերժել է այն վարույթ ընդունել, պատճառաբանելով, որ հայցադիմումում մատնանշված սխալներն ուղղելու և այն կրկին ներկայացնելու դատավարական ռեժիմը կիրառելի չէ սույն

² http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933268

³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927128

գործի նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից վերաքննիչ բողոքի արդյունքում չի կայացվել և օրինական ուժ չի ստացել համապատասխան դատական ակտը, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ վերադարձված մասով հայցվորի կողմից կրկին ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի քննարկումը ենթակա է մերժման: Վերաքննիչ դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի: Տվյալ որոշումը բողոքարկվել է վճռաբեկության կարգով, բողոքը չի ընդունվել վարույթ: Հայցվորը այս գործողություններից հետո նորից է ներկայացրել հայցը, որը այս անգամ ընդունվել է վարույթ⁴:

Բացթողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն հայցվորների կողմից ներկայացվել է 3 գործով: Երկու դեպքում միջնորդությունը բավարարվել է, մեկ դեպքում դատարանը այն թողել է առանց քննության, քանի որ գտել է, որ հակառակի վերաբերյալ փաստի բացակայության պայմաններում հայց հարուցելու ժամկետները բաց թողնված չեն եղել:

11 դատական գործով Հայցվորները «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ազատված են եղել պետական տուրք վճարելու պարտականությունից:

2 գործով ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն, որոնցից մեկը՝ ազատելու վերաբերյալ բավարարվել է, մյուսը՝ մերժվել: Վերջին դեպքում Դատարանն արձանագրել է, որ ներկայացնելով պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին միջնորդություն՝ հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ ապացույց, որը դատարանին թույլ կտար եզրահանգել, որ գործով հայցվորը գտնվում է ոչ բարենպաստ գույքային դրության մեջ: Նման պայմաններում դատարանը ներկայացված միջնորդությունը հիմնավոր չի գնահատել և գտել է, որ այն ենթակա է մերժման⁵:

Բավարարված միջնորդության պարագայում, դատարանն արձանագրել է, որ հայցվորի պնդումն առ այն, որ գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, հաստատվում է հայցադիմումին կից ներկայացված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գրությամբ առ այն, որ հայցվորի՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու մասին դիմումը մերժվել է այն հիմքով, որ վերջինս չունի բնակության վայրի հաշվառում: Նման պայմաններում պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը ըստ դատարանի հիմնավոր է⁶:

⁴ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927823


⁵ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927823

⁶ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929205

Մեկ դեպքում գործով վարույթի շրջանակներում հայցվորի կողմից դատավորին հայտնվել է ինքնաբացարկի միջնորդություն՝ դատավորի կանխակալ վերաբերմունքի հիմքով, որը չի բավարարվել⁷:

Ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման հարց ուսումնասիրված գործերով քննարկվել է երկու վարույթների շրջանակներում: Երկու դեպքում էլ փոխարինման առաջարկությունը արվել է դատարանի կողմից և ընդունելի եղել հայցվոր կողմի համար: Առաջին դեպքում դատարանի որոշմամբ պատասխանող Ոստիկանության կադրային քաղաքականության վարչությունը փոխարինվել է պատշաճ պատասխանողով՝ Ոստիկանությունով⁸: Երկրորդ դեպքում՝ դատարանի արձանագրային որոշմամբ առաջարկվել է հայցվորին ոչ պատշաճ պատասխանող ՀՀ ոստիկանությունը փոխարինել պատշաճ պատասխանող ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությամբ⁹:

Հայցի ապահովում կիրառելու միջնորդություն ներկայացվել է 26 գործով: 23 դեպքում ներկայացված հայցի ապահովման միջոցը հանդիսացել է դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարել արգելելը: 2 դեպքում միջնորդվել է հայցվորի պահանջի ժամանակավոր բավարարում, մեկ դեպքում՝ որևէ իրավիճակի ժամանակավոր պահպանումը կամ փոփոխումը: Ընդ որում, 26 գործից 21-ով ներկայացված հայցի ապահովում կիրառելու մասին որոշումները հասանելի են եղել դատալեքս տեղեկատվական համակարգում, իսկ 5-ով՝ ոչ: Առանձին դեպքերով, թեպետև որոշումից հասկացվել է, որ հայցի ապահովման միջնորդությունը բավարարվել է, սակայն առանձին որոշում, որպես այդպիսին, դատալեքս տեղեկատվական հարթակում հասանելի չի եղել:



22 գործով ներկայացված միջնորդությունները բավարարվել են: 4 գործով մերժվել են: Բավարարված միջնորդությունների գերակշիռ մասը՝ 18 միջնորդություն և համապատասխանաբար որոշում, վերաբերել են վտարման գործողություններ կատարելու

⁷ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929166

⁸ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935586

⁹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931130

արգելքին: Ինչի կապակցությամբ բոլոր դեպքերում, հղում կատարելով օրենսդրական համապատասխան կարգավորումներին, դատարանը նշել է, որ հայցի ապահովման միջոցի ձեռնարկումն անհրաժեշտ է, կանխելու գործով կայացվելիք դատական ակտի կատարման հնարավոր անհնարիությունը կամ կատարման դժվարացումը:

Միայն մեկ դեպքում գործին մասնակցող անձի կողմից, ում դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, ներկայացվել է իր հնարավոր վնասների հատուցման համար հակընդդեմ ապահովում պահանջելու միջնորդություն¹⁰: Ինչը սակայն մերժվել է: *Դատարանը մերժման որոշմամբ նշել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակն է հայցը բավարարելու դեպքում երաշխիքներ ապահովել հարուցված հայցով ապագա վճռի կատարման համար, միաժամանակ հաշվի առնելով այն, որ քննարկվող դեպքում վարչադատավարական կարգով հարուցված գործի շրջանակներում դատական հսկողության առարկա է հանդիսանում ... բնակարանն ազատելու ՀՀ ոստիկանության գործողությունների իրավաչափությունը, գտնում է, որ սույն գործով ձեռնարկված հայցի ապահովումը վերացնելը կհանգեցնի գործով կայացվող դատական ակտի կատարման անհնարիությանը, քանի որ հայցի ենթադրյալ բավարարման դեպքում Դատարանը պետք է պարտավորեցնի ՀՀ ոստիկանությանը բնակարանն ազատելուն ուղղված գործողությունների իրականացումից, մինչդեռ հիշյալ խնդրո առարկա գործողությունները մինչև սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելը կատարելը՝ բնակարանն ազատելը, կիմաստագրկի հայցվորի դատական պաշտպանությունը, որպիսի պարագայում արդարադատությունը կկրի ձևական բնույթ:*

Նման պայմաններում Դատարանը գտել է, որ հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին երրորդ անձ Ա. Ս-ի միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման:

Ուսումնասիրված գործերով վարույթի շրջանակներում քննարկվող ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացվել է մեկ դեպքում¹¹: Չնայած վճռից հասկացվել է, որ ներկայացված միջնորդությունը մերժվել է, սակայն լրացուցիչ տեղեկություն միջնորդության հիմքերի և արդյունքների վերաբերյալ գործով կայացված վճռով հասանելի չէ:

Թվով 5 վարույթների շրջանակներում հայցվորների կողմից կատարվել է հայցի հիմքի և առարկայի լրացում, որի արդյունքում փոփոխվել է նաև հայցատեսակը:

Այս առնչությամբ պետք է նշել, որ ուսումնասիրված որևէ դեպքով պատասխանողի կողմից հայցվորի պահանջը չի ընդունվել /ինչպես ոչ լրիվ, այնպես էլ ոչ մասնակի/:

Վարչական դատարանում քննված գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև ոստիկանության կողմից իրականացված վարչարարության արդյունքում ընդունված

¹⁰ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937087

¹¹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929166

վարչական ակտերի տեսակները: Այսպես, 80 գործից 53-ի պարագայում Դատարանում վիճարկվել են ոստիկանության կողմից ընդունված միջամտող վարչական ակտերը:

Կայացված 53 ակտերից 29-ի դեպքում վարչական վարույթը հարուցվել է հայցվորի կողմից, մնացած 23-ի դեպքում՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

Հայցվորի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում բարձրացվել են տարբեր պահանջներ: Մասնավորապես՝

- Տեղեկության տրամադրում,
- կենսաթոշակի վերջնահաշվարկի վերանայում,
- սեփականության իրավունքով պատկանող գույքի վերադարձ,
- քաղաքացիության տրամադրում:

Ուսումնասիրված գործերից 44-ի պարագայում գործի քննությանը ներգրավված է եղել երրորդ անձ: Ընդ որում, գործերի մեծամասնությամբ երրորդ անձ ներգրավվել է ֆիզիկական անձ /22 գործ/: 9 գործով երրորդ անձ է ներգրավվել ՀՀ Ֆինանսների նախարարությունը, 5 դեպքով տարբեր բանկեր, 4 վարույթի շրջանակներում երրորդ անձ է ներգրավվել Ազգային անվտանգության ծառայությունը:

Հարկ է նշել, որ երրորդ անձ ներգրավվելու դեպքերից 21-ի պարագայում դատարանի որոշումը դատալեքս տեղեկատվական համակարգում հասանելի չի եղել:

Երրորդ անձ ներգրավվելու 44 դեպքերից 38-ի պարագայում որոշումը կայացվել է դատարանի նախաձեռնությամբ, մնացած 6 դեպքում՝ անձի դիմումի հիման վրա:

Վերոնշյալ գործերից 26-ի պարագայում երրորդ անձը անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել է դատավարությանը: Ընդ որում, դեպքերի մեծամասնության պարագայում 28 գործով երրորդ անձիք նաև իրենց դիրքորոշումն են հայտնել հայցի վերաբերյալ՝ առարկելով ներկայացված հայցի դեմ և խնդրելով մերժել այն:

Ուսումնասիրված դատական գործերի ընթացքը՝ ըստ դատական նիստերի թվի և տևողության, տարբեր դրսևորումներ է ունեցել: Այսպես,


15 գործով դատական նիստերի թիվը եղել է 2,

20 գործով՝ 3,

19 գործով՝ 4,

13 գործով՝ 5,

12 գործով՝ 5-ից ավելին:



Ուսումնասիրված 80 գործերից 22-ի դեպքում դատարանը միանգամից նշանակել է դատաքննության նիստ, 58-ի պարագայում անց է կացվել նախնական դատական նիստ:

Ընդ որում, 4 դեպքում նախնական դատական նիստերի քանակը եղել է 3, իսկ 2 դեպքում՝ 4 : 15 վարույթների պարագայում նախնական դատական նիստերը եղել են 2 անգամ, մնացած դեպքերում՝ 1 անգամ:

Ուսումնասիրությամբ արձանագրվել են նաև նշանակված, սակայն չկայացած դատական նիստեր՝ տարբեր պատճառներով: Այսպես,

Դատավորի արձակուրդում լինելու պատճառով չի կայացել 2 նիստ,

համավարակի պատճառով՝ 2 նիստ,

դատավորի վատառողջ լինելու պատճառով՝ 5 նիստ,

ոչ աշխատանքային օր լինելու հիմքով՝ 2 նիստ:

Հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո մինչև վերջնական դատական ակտ կայացնելը ընկած ժամանակահատվածը ուսումնասիրված բոլոր գործերով տարբեր է, սակայն առանց որոշակի չափանիշի, որը թույլ կտա դուրս բերել ժամկետների որոշման ուղենիշները: Առավելագույն ժամկետը եղել է 1 տարի 7 ամիս, նվազագույնը՝ մինչև 3 ամիս՝ ընդ որում, մեկից ավելի գործերով:

Ուսումնասիրված գործերով կասեցում արձանագրվել է միայն մեկ դեպքում¹², երբ դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել է սահմանադրական դատարան: Մասնավորապես, *Դատարանի 15.08.2019 թվականի որոշմամբ գործի քննությունը կասեցվել է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ այնքանով, որքանով ոստիկանության ծառայողին արգելում է լինել որևէ կրոնական կազմակերպության անդամ, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու*

¹² http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938248

խնդրանքով ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու նպատակով: Գործը վերսկսվել է Դատարանի 26.02.2020 թ -ի որոշմամբ:

Ընդ որում՝ ՀՀ սահմանադրական դատարանի 18.02.2020 թվականի թիվ ՄԴՈ-1506 որոշմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը ճանաչվել է Սահմանադրության 41-րդ հոդվածին և 45-րդ հոդվածին հակասող և անվավեր: Դատարանի 26.02.2020 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը վերսկսվել է և գործը նշանակվել դատաքննության¹³:

80 գործերից արագացված կարգով քննվել է 3 գործ, որոնցից մեկի դեպքում հիմքը հայտնի չէ¹⁴: Մյուս երկուսի պարագայում հիմք հանդիսացել են հայցի ակնհայտ անհիմն լինելը¹⁵:

Գրավոր դատաքննության անցնելու որոշում որևէ գործով չի կայացվել:

Ուսումնասիրված 80 գործերից 79-ի արդյունքում դատարանի կողմից կայացվել է վճիռ, երկու դեպքում՝ գործերով վարույթը մասամբ կարճվել է, իսկ մասով կայացվել է վճիռ:

Կարճման մասին որոշում կայացվել է երկու գործով: Մեկ դեպքում՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով, իսկ մյուս դեպքում առկա են եղել հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքեր: Վերջին դեպքում, մասնավորապես, *Դատարանն արձանագրել է, որ Հայցվորը հայցել է ոչ միայն իր իրավունքների՝ դատական կարգով արդյունավետ պաշտպանությունը, այլև խնդրել է այլ անձանց մասով պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի ոստիկաններին ... հասցեից ներխուժումը վերացնելուն/վտարելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալ: Սակայն հայցվոր է հանդիսացել է միմիայն Պ.Ն.-ն:*

Դատարանն արձանագրել է, որ հայցվոր Պ.Ն.-ն սույն դեպքում կարող է հայցել բացառապես իր իրավունքների և ազատությունների՝ դատական կարգով արդյունավետ պաշտպանությունը, որպիսի պայմաններում ներխուժումը վերացնելուն/վտարելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասով գործի վարույթը ենթակա է կարճման՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով¹⁶:

Ուսումնասիրված գործերից մեծամասնության պարագայում դատարանի վճռով հղում կատարվել է Սահմանադրությանն ու ներպետական օրենսդրության կարգավորումներին: ՄԻԵԴ նախադեպերին ու միջազգային պայմանագրերից բխող կարգավորումներին հղում կատարվել է միայն 15 գործով:


¹³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928561

¹⁴ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935525

¹⁵ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938248,


http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929205

¹⁶ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929166



9 գործով Դատարանը անդրադարձել է դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարների հարցին: Բավարարված հայցերի դեպքում ներկայացուցչի ծախսի փոխհատուցման չափը տարբեր է եղել, առավելագույնը՝ 140.000 ՀՀ դրամ¹⁷, նվազագույնը՝ 10.000 դրամ¹⁸:

Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկվել է 42 դեպքում, որից 31 դեպքում բողոքարկվել է հայցվոր կողմի, 6 դեպքում՝ պատասխանողի, 5 դեպքում՝ երրորդ կողմի կողմից:



Ապացույցներ

Հայցը վարույթ ընդունելիս վարչական վարույթի նյութերը պատասխանողից պահանջելու մասին որոշում դատարանի կողմից կայացվել է 20 գործով:

Դատարանի որոշման հիմքում որպես ապացույց դրվել են տարատեսակ տվյալներ ու փաստաթղթեր:

¹⁷ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938656

¹⁸ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939029


Հիմնականում դատարանի կողմից որպես այդպիսիք ուսումնասիրվել են վարչական վարույթով կազմված արձանագրությունն ու որոշումը, պետական գրանցման վկայական, առուվաճառքի պայմանագրեր, տարատեսակ գրություններ:

Առանձին գործերով օգտագործվել են բացառապես վարչական վարույթի նյութերը:

Ուսումնասիրված գործերի կեսից ավելիի պարագայում՝ 62 գործով, դատարանը վճռում անձրադարձել է հայցվորի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից ներկայացված յուրաքանչյուր փաստարկին և ապացույցին: Միևնույն ժամանակ առկա են նաև դեպքերը, երբ փաստարկները, ըստ էության, բավարար անդրադարձ չեն ստացել: Հատկապես կացության կարգավիճակի տրամադրման գործերով հայցվորի կողմից բերված ոչ բոլոր փաստարկներն են դատարանի կողմից պատշաճ ուսումնասիրվել:

Նմանապես, եղել են դեպքեր, երբ դատարանը չի անդրադարձել հայցվորի կողմից վարչական վարույթի ժամկետների կամ լսումների մասին փաստարկներին:

Ինչ վերաբերում է պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված փաստարկներին դատարանի վճռով անդրադառնալուն, ապա թվային պատկերը այլ է: 58 գործով պատասխանողի կողմից ներկայացված յուրաքանչյուր փաստարկ ու ապացույց վճռով շոշափվել է:



Ուսումնասիրված 80 գործերից 20-ի պարագայում եղել են իրավիճակներ, երբ ըստ դատարանի, հայցվորը կամ վերջինիս ներկայացուցիչը ներկայացրել է փաստեր, որոնց վերաբերյալ ներկայացված չեն եղել ապացույցներ: Օրինակ, դատարանին չի ներկայացվել որևէ ապացույց՝ Հայցվորի կողմից անշարժ գույքի տիրապետման օրինականության վերաբերյալ, այդ թվում՝ գրավոր կնքված պայմանագիր կամ լիազորագիր, որի համաձայն՝ իրավունք ունի մշտապես կամ որոշակի ժամանակով գտնվելու տվյալ անշարժ գույքի տարածքում: Դատաքննությամբ հետազոտված ապացույցներով չի հիմնավորվել նաև անշարժ գույքի տարածքում Հայցվորի գտնվելու վերաբերյալ Ընկերության գրավոր կամ բանավոր համաձայնությունը¹⁹:

¹⁹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937005

Կան այնպիսի դեպքեր, երբ գործով որևէ ապացույց կամ փաստարկ չի ներկայացվել, որը հիմք կտար Ոստիկանության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հայցը բավարարելու համար:

14 գործի շրջանակներում արձանագրվել են իրավիճակներ, երբ, ըստ դատարանի, պատասխանողի ներկայացուցիչը ներկայացրել է փաստեր, որոնց վերաբերյալ ներկայացված չեն եղել ապացույցներ:

Նմանատիպ դեպքերում դատարանի կողմից կիրառվել են նույն մոտեցումն ու հիմնավորումները:

Օրինակ՝ Դատարանը նշել է, որ պատասխանողը Հայցվորի կողմից թմրամիջոց օգտագործելու հանգամանքը հաստատված է համարել՝ չունենալով այդ փաստի վերաբերյալ բավարար ապացույցներ և չիրականացնելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն²⁰: Կան դատարանը արձանագրել է, որ դատաքննությամբ պատասխանողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր, որ հայցվորը պատշաճ ձևով ծանուցված է եղել վարչական վարույթի լուսման մասին, կամ առհասարակ պատասխանողի կողմից հայցվորին վերագրվող արարքը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել²¹:

Հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի քննության ընթացքում դատարանի կողմից ապացույց պահանջվել է 9 վարույթների շրջանակներում: Որոնցից մեծ մասի պարագայում դատարանը ինքն է դիմել պետական տարբեր մարմիններին՝ խնդրելով տրամադրել անհրաժեշտ լրացուցիչ տվյալներ: Մեկ դեպքում ապացույց պահանջվել է երրորդ անձից:

Ուսումնասիրված գործերի շրջանակներում վկաներ հրավիրվել են միայն 4 վարույթների ընթացքում: Ընդ որում, 3 դեպքում դատարանի նախաձեռնությամբ, մեկ դեպքում՝ հայցվոր կողմի միջնորդությամբ:

Վկաների կողմից տրված ցուցմունքները կրել են տարբեր բնույթ, օրինակ՝ վիճարկվող որոշման մեջ նշված տարբեր փաստերի առնչությամբ, դեպքի առնչությամբ և հայցվորի հետ համատեղ բնակվելու և կարգավիճակի առնչությամբ:

Մեկ դեպքում ցուցմունքը տրվել է փորձագետի կողմից՝ օրգանիզմում թմրամիջոցի պահպանվելու ժամանակահատվածի առնչությամբ:

Հարկ է նշել, սակայն, որ ուսումնասիրված 80 գործերից որևէ մեկի շրջանակներում փորձաքննություն նշանակված չի եղել:

²⁰ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937328

²¹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936014

II. Վարչարարության խնդիրներ

Առանձին հայցադիմումների ուսումնասիրությունը վեր է հանել վարչական մարմնի կողմից վարչարարության իրականացման վկայակոչման արժանի դրվագներ և խնդիրներ:

Դատարանի կողմից 2 գործով հաստատվել է վարույթի իրականացման ժամկետների պահպանման խնդիր²²:


Վարչական մարմնի կողմից փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման հարցի առնությամբ դատարանը 27 դեպքում խախտում չի գտել, 19 դեպքում արձանագրել է խախտում:

Վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմնի կողմից լսումների անցկացման հարցին դատարանը անդրադարձել է 6 դեպքում, ընդ որում 1 դեպքում՝ իր նախաձեռնությամբ: 4 գործով Դատարանն արձանագրել է խախտում:

Առանձին դեպքերում որպես հիմնավորում դատարանը նշել է, որ լսումների հարցը չի քննարկում, քանի որ այլ հիմքերով հայցը ենթակա է մերժման:

Ուսումնասիրությունը վեր է հանել նաև այնպիսի իրավիճակ, երբ Հայցվորը նշել է, որ պատասխանողի կողմից չեն իրականացվել լսումներ և առհասարակ հայցվորը ներգրավված չի եղել որոշումը կայացնելու համար իրականացված վարչարարությանը, սակայն Դատարանը այնուհանդերձ այդ հարցին անդրադարձ չի կատարվել²³:

16 գործով դատարանն անդրադարձել նաև վարչական ակտում այն ընդունելու փաստական և իրավական հիմքերը ներառված և պատճառաբանված լինելու հարցին:



Օրինակ, Դատարանն արձանագրել է, որ վիճարկվող որոշմամբ ընդամենը արձանագրվել է, որ հայցվորի կողմից կատարվել է արարք՝ նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 172.2-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ հասարակական վայրերը օգտագործելու կանոնները խախտելը, մինչդեռ որոշմամբ բացահայտված չէ, թե հասարակական վայրերը օգտագործելու կոնկրետ որ կանոնները, սահմանափակումներն են

²² http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936825
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935622

²³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931251

խախտվել հայցվորի կողմից, չի նշվել, թե որ օրենքով կամ օրենքի հիման վրա արձակված վարչական ակտով սահմանված սահմանափակումներն են խախտվել: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ հայցվորը զրկվել է իր արդյունավետ իրավական պաշտպանությունն իրացնելու հնարավորությունից²⁴:

Նմանատիպ մոտեցում ցուցաբերվել է նաև վարչական ձեռքարկության մեկ գործի շրջանակներում: Մասնավորապես, հայցվորը ձեռքարկվել է այն հիմքով, որ չի կատարել Պատասխանողի օրինական պահանջը: Սակայն դատարանը նշել է, որ տվյալ դեպքում Պատասխանողի կողմից նման գործողություն կատարելու ժամանակ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Հայցվորը իրազեկված չէր, և չէր կարող իրազեկված լինել Պատասխանողի պաշտոնական կայքում տեղադրված հավաքը դադարեցնելու մասին հայտարարության մասին²⁵:

Մեկ այլ դեպքում դատարանը ընդունել է, որ վարչական ակտը իրավաչափ չէ, և դատաքննության ընթացքում պատասխանողը չի ապահովել իր մասով ապացուցման ընթացքը:

Ոստիկանության կողմից ոչ պատշաճ վարչարարություն արձանագրվել է նաև ճանապարհատրասնսպորտային կանոնների խախտման հիմքով քաղաքացուն պատասխանատվության ենթարկելու գործով ոստիկանության որոշումը բողոքարկելու դեպքերում: Մասնավորապես *դատարանը ոչ իրավաչափ է ճանաչել ՀՀ ոստիկանության կողմից «Զիջեք ճանապարհը» նշանը չտեղադրելը: Նշված վճռով ՀՀ վարչական դատարանը հաստատված է համարել, որ վթարային իրադրությունն առաջացել և ճանապարհատրասնսպորտային պատահարը տեղի է ունեցել ոչ թե երթևեկության մասնակիցների մեղքով, այլ պատահարի վայրում ճանապարհային երթևեկության ոչ պատշաճ և սխալ կազմակերպմամբ, ՀՀ ոստիկանության կողմից ոչ իրավաչափ կերպով թույլ է տրվել անգործություն, որի արդյունքում տեղի է ունեցել վթար, որի հետևանքով Ռաֆայել Ալեքսանյանը կրել է վնաս: Դատարանը գտել է, որ պատասխանող ՀՀ ոստիկանության իրականացրած ոչ իրավաչափ վարչարարության և հայցվորին պատճառված վնասի միջև առկա է իրավաբանական նշանակություն ունեցող պատճառահետևանքային կապ*²⁶:

➤ *Կացության կարգավիճակի տրամադրման առնչությամբ գործեր*

Հատկանշական է ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մերժումների պատճառաբանությունը: Ոստիկանությունը նման դեպքերում հիմնականում հղում է կատարել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից տրամադրված եզրակացությանը, համաձայն որի՝ կացության կարգավիճակ տրամադրելու դիմումը

²⁴ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936435

²⁵ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809924444

²⁶ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928102

նպատակահարմար է մերժել: Լրացուցիչ հիմնավորումներ սակայն չեն տրամադրվել: Այս հարցին առնչվող դիտարկված 20 գործից միայն 3-ն են բավարարվել, 3-ն էլ տարբեր դատավորների կողմից: Վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վարչական դատարանի դատավորների մեծ մասը հայցը մերժում են, քանի որ գտնում են, որ ԱՎ վարչությունը կաշկանդված է ԱԱԾ կարծիքով և չի կարող կասկածի տակ դնել այն՝ անկախ տվյալների մանրամասն կամ չհիմնավորված լինելուն:

Մտահոգության տեղիք է տալիս հատկապես կացության կարգավիճակի տրամադրման գործերով դատարանի վճիռներն ու հիմնավորումները, այն դեպքում, երբ ի սկզբանե պատասխանողի որոշումը բողոքարկելիս հայցվորների կողմից մեծամասամբ ներկայացվել է ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից մերժման որոշման հիմնավորվածության խնդիրը: Ինչը շարունակում է ակտուալ լինել նաև դատարանի վճռի պարագայում և կարգավիճակի տրամադրման մերժումը բավարար հիմնավորում չի ստանում:

Դատարանը նմանատիպ դեպքերում արձանագրել է, որ *օտարերկրացուն ՀՀ ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ տալու հարցի լուծման գործընթացում ներգրավված են երկու տարբեր մարմիններ. մի կողմից՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը, մյուս կողմից՝ Ազգային անվտանգության ծառայությունը, որոնցից յուրաքանչյուրը տվյալ բնագավառում իրականացնում է միմյանց փոխլրացնող, սակայն միայն իրեն հատուկ, առանձին գործառույթներ և վարչարարություն, որպիսի պայմաններում օրենսդրությունը չի նախատեսել, որպեսզի վերը նշված վարչական մարմինները վերահսկողություն իրականացնեն մեկը մյուսի իրականացրած վարչարարության օրինականության նկատմամբ, կամ որ անձնագրային և վիզաների վարչությունը կասկածի տակ դնի ԱԱԾ համաձայնության կամ առարկության օրինականությունը, ստուգի այդպիսի համաձայնության կամ առարկության հիմքում ընկած՝ ԱԱԾ կողմից ստացված, մշակված և վերլուծված տեղեկատվության իսկությունը: Այսինքն՝ անձնագրային վարչության խնդիրը չէ, և նա այդպիսի գործառույթ էլ չունի կրկնօրինակելու մեկ այլ վարչական մարմնի, տվյալ դեպքում՝ Ազգային անվտանգության ծառայության գործառույթները²⁷:*

Դատարանը գտել է նաև, որ *պայմանավորված ԱԱԾ գործառույթների առանձնահատկություններով, ինչպես նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ԱԱԾ գործառույթների տարանջատմամբ՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը կաշկանդված է ԱԱԾ բացասական եզրակացությամբ, այդ եզրակացության իրավաչափության կանխավարկածով, և նման եզրակացության առկայությունը բացառում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից կացության կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ դիմումի բավարարումը: Այլապես, ինքնանպատակ կլիներ ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 7-ի որոշման այն*

²⁷ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931251

պահանջը, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը կարգավիճակ տալու հարցը համաձայնեցնում է ԱԱԾ հետ, կիմաստագրկվեին Կանոնադրությամբ ԱԱԾ վերապահված գործառնությունները²⁸:

Հաշվի առնելով դատարանի վերոհիշյալ եզրահանգումն առ այն, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունն իրավասու չէ ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրել ԱԱԾ բացասական եզրակացության առկայության պայմաններում, նման եզրակացության առկայությունը բացառում է կացության կարգավիճակի տրամադրումը՝ դատարանը գտնում է, որ ներկայացված պարտավորեցման հայցը բավարարվել չի կարող, քանզի դատարանն իրավասու է վարչական մարմնին պարտավորեցնել բարենպաստ վարչական ակտի ընդունում, եթե բավարարված են այդ ակտն ընդունելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները, և բացակայում է բարենպաստ ակտի կայացմանը խոչընդոտող որևէ հանգամանք: Մինչդեռ, տվյալ դեպքում ԱԱԾ բացասական եզրակացության առկայության պայմաններում բավարարված չեն բարենպաստ վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները²⁹:

Բավարարված հայցերից մեկով դատարանը նշել է, որ ԱԱԾ-ն որևէ հստակեցում չի ներկայացրել այն հարցում, թե ինչ հիմքերով է կասկածի տակ դնում հայցվորի ՀՀ-ում բնակվելու հարցը, այն պարագայում, երբ հայցվորն ամուսնացած է ՀՀ քաղաքացու հետ: Ավելին՝ ԱԱԾ-ն կարող էր նշել հայցվորի ՀՀ-ում գտնվելու իրական նպատակը: Մինչդեռ ԱԱԾ-ն միայն նշել է, որ հայցվորը ներկայացրել է կեղծ տվյալներ: Հայցվորը դատարան էր ներկայացրել տեղեկանք համատիրությունից, որ կնոջ հետ մեկտեղ բնակվում է Երևանում և սույն փաստը ո՛չ պատասխանողը, ո՛չ էլ երրորդ անձը կասկածի տակ չեն դրել, ավելին, հարցաքննել է հայցվորի կինը, ով հաստատել է, որ ամուսնացած է հայցվորի հետ: Սույն փաստը ևս ո՛չ պատասխանողը, ո՛չ էլ երրորդ անձը կասկածի տակ չեն դրել: Դատարանն արձանագրել է, որ չկան բավարար տվյալներ հայցվորի հայտնած բնակվելու նպատակը կասկածի տակ դնելու համար:

Նման մոտեցումը բացառություն է, այլ ոչ թե պրակտիկա: Օրինակ, մեկ գործով Դատարանը բավարար է համարել ԱԱԾ կողմից դատարանի հարցմանն ի պատասխան տրված տրված հետևյալ գրության բովանդակությունը՝ հայցվորը Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակի տրամադրումը նպատակարարաբար է մերժել՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի «գ» կետի համաձայն (գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը): Դատարանը չի անդրադարձել հայցվորի այն փաստարկին,

²⁸ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931251

²⁹ http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929301

որ ԱԱԾ-ի կողմից տրամադրված տվյալները չեն հիմնավորվում, և կարող են լավել փակ դատական նիստում³⁰:

Մեկ այլ գործով Դատարանը նախ արձանագրել է, որ վարչական ակտից պարզ չէ, թե «Օտարերկրացիների մասին» ՀՀՕ19-րդ հոդվածի «գ» կետով նախատեսված՝ նշված 3 փաստակազմերից կոնկրետ որ փաստակազմն է տվյալ դեպքում առկա, ինչը նշանակում է նաև, որ մերժման իրավական հիմքը նշված է ոչ բավարար ճշգրտությամբ: Վարչական ակտում շարադրված չէ մերժման հիմքում ընկած որևէ փաստական հանգամանք: Ավելին, գործի քննության արդյունքում դատարանը հաստատված է համարել, որ պատասխանող վարչական մարմինը Օրենքի 37-րդ հոդվածի պահանջներին համապատասխան որևէ գործողություն չի կատարել, որևէ միջոց չի ձեռնարկել պարզելու համար, թե «Օտարերկրացիների մասին» ՀՀՕ19-րդ հոդվածի «գ» կետով նախատեսված՝ վերը նշված 3 փաստակազմերից կոնկրետ որ փաստակազմն է տվյալ դեպքում առկա, ինչ փաստական հանգամանքների հիմքով է ԱԱԾ նպատակահարմար համարել կացության կարգավիճակի մերժումը /այս հանգամանքն ընդունում է պատասխանողի ներկայացուցիչը/: պատասխանող վարչական մարմինը ինքնուրույն և/կամ ԱԱԾ միջոցով չի բացահայտել տվյալ գործի համար բոլոր էական փաստական հանգամանքները, չի ապահովել վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը: Միաժամանակ, չի ապահովել վարչական ակտի որոշակիությանը և հիմնավորվածությանը ներկայացվող պահանջներն այն աստիճանի, որ ակտի հասցեատիրոջ համար չի երաշխավորվել այդ ակտի դեմ պաշտպանությունն արդյունավետորեն կազմակերպելու հնարավորությունը³¹:

1 գործով Դատարանն արձանագրել է, որ գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ հայցվորի գտնվելը ՀՀ-ում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը, քանի որ հայցվորը որպես նման նպատակ է մատնանշել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, այն է՝ Ընկերությունը հիմնադրելը, դրա 70 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսանալը, իսկ գործի տվյալներով որևէ կերպ չի հիմնավորվում այլ նպատակի առկայությունը, ավելին՝ դրանով հիմնավորվում են ինչպես վերոնշյալ փաստերը, այնպես էլ Ընկերության փաստացի գործունեություն իրականացնելու հանգամանքը: Վարչության պետը, ընդունելով թիվ 1607 որոշումը, անտեսել է նշված փաստական և իրավական հիմքերն ու դրա արդյունքում ոչ իրավաչափորեն մերժել է հայցվորի իրավունքի ճանաչումը՝ չապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը ու չբացահայտելով բոլոր, այդ թվում՝ հայցվորի օգտին առկա հանգամանքները, իսկ սույն գործում եղած ապացույցների և տեղեկությունների ամբողջությունը բավարար է

³⁰ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931251

³¹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932455

հայցվորի իրավունքը ճանաչելու և նրան ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ տալուն պատասխանողին պարտավորեցնելու համար³²:

Ի պատասխան Դատարանի վերոնշյալ գրության՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից Դատարան է ներկայացվել գրությունը, համաձայն որի՝ Հնդկաստանի Հանրապետության քաղաքացուն Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակի տրամադրումը նպատակահարմար է գտնվել մերժել «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի «գ» կետով (նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը): Նշված հիմքի առկայությունը պարզվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի (օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան կամ կացության կարգավիճակ տալու մասին եզրակացություն կազմելու և որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը) հիման վրա իրականացված համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, որոնք հրապարակման ենթակա չեն և տրամադրվել չեն կարող:

Ծառայությունը գրությամբ Դատարանին հայտնել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ սույն գործով հայցվորը իր մասին ներկայացրել է կեղծ տեղեկություններ, իսկ նշված տեղեկության հիմքերը հրապարակման ենթակա չեն:

Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ հայցվորը կացության կարգավիճակ ստանալու համար դիմում-հարցաթերթիկը լրացնելիս այցելության նպատակը նշել է՝ ձեռնարկատիրական գործունեություն («Business»), սակայն ի պատասխան նախ պատասխանողի հարցմանը՝ Ազգային անվտանգության ծառայության հաշվառման և արխիվային ֆոնդերի վարչության պետը հայտնել է, որ Հայցվորին Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակի տրամադրումը նպատակահարմար է մերժել՝ համաձայն Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի «գ» կետի, այնուհետև ի պատասխան դատարանի հարցմանը՝ նույն պաշտոնատար անձը իր՝ պարզաբանել է, որ Հնդկաստանի քաղաքացու գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը, որի առկայությունը պարզվել է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի հիման վրա իրականացված համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

³² http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933757

Հայցվոր կողմը որևէ կերպ չի արձագանքել նշված ապացույցներին՝ մի կողմից, և չի ներկայացրել իր հայտնած տեղեկատվությունը (ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակի մասին) հաստատող որևէ ապացույց՝ մյուս կողմից: Ուստի իրավասու մարմնի՝ Ազգային անվտանգության ծառայության տրամադրած տեղեկատվությունը կասկածի տակ դնելու որևէ հիմք չկա:

Նշված ապացույցի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը տիրապետում է Հայցվորի՝ Հայաստանի Հանրապետությունում այլ նպատակի առկայության մասին:

Կացության կարգավիճակի տրամադրումը մերժելիս վարչական մարմինը՝ տվյալ դեպքում Ոստիկանության Անձնագրային և Վիզաների (ԱՎ) վարչությունը, չի պահպանում վարչական ակտին ներկայացվող օրենքի պահանջները՝ չի բովանդակում վարչական ակտի ընդունումը մերժելու փաստական և իրավական հիմքերը: Չնայած հղում է կատարվել «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքին սակայն, չի նշվել, թե հատկապես օրենքով սահմանված որ հիմքն է խախտվել դիմողի կողմից, այն դեպքում, երբ ներկայացված են եղել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները³³:

Նմանատիպ մեկ այլ դեպքով հայցվորի կողմից կրկին ներկայացվել է նույն խնդիրն ու պահանջը: Հատկանշական է, որ գործով վարույթի շրջանակներում Պատասխանողը նշել է, որ տեխնիկական պատճառներով կատարվել է վրիպակ, ինչի կապակցությամբ պետք է կատարվի համապատասխան ուղղում, որի մասին որոշումը կուղարկվի Հայցվորին³⁴: Այն հարցին, թե կոնկրետ ինչ հիմքով են մերժել հայցվորին ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին դիմումը և ինչ փաստեր են առկա վարչական վարույթում, պատասխանողի ներկայացուցիչը հայտնել է, որ չգիտի և չի կարող ասել, թե ինչ հիմքով են մերժել դիմումը, իսկ ԱՎ վարչությունն էլ մանրամասն չի տիրապետում, թե սույն գործի շրջանակներում «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված «գ» կետի որ ենթակետով է տրամադրվել մերժումը, քանի որ համապատասխան փաստեր առկա չեն: Հետագայում Պատասխանողը վերահաստատել է, որ իր մոտ առկա չէ տեղեկություն այն մասին, թե ինչ հիմքով են մերժել հայցվորին ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին դիմումը, իսկ գրությանը կից ուղարկել են վարչական վարույթի նյութերի պատճենները, ինչպես նաև՝ Պատասխանողի կողմից Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության՝ Հայցվորին ՀՀ ժամանակավոր կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու մասին որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին կայացված որոշումը: Ավելին, Վարչական վարույթի նյութերից տրամադրված պատճեններից ևս պարզ չէ, թե կոնկրետ ինչ փաստական հիմքով են մերժել հայցվորին ժամանակավոր կացության

³³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936466,
http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936466

³⁴ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932049

կարգավիճակի տրամադրումը այն դեպքում, երբ նրա մոտ առկա է եղել ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ օրենքով նախատեսված միանգամից երկու հիմք³⁵:

Վերոնշյալ դեպքով հայցվորի կողմից բարենպաստ վարչական ակտ ընդունելու, այն է՝ հայցվորի դիմում-միջնորդագիրը բավարարելու, ՀՀ տարածքում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու մասին պահանջ է ներկայացվել: Նմանատիպ մնացած դեպքերով դատարան ներկայացված հայցով պահանջ է ներկայացվել պարտավորեցնել ՀՀ ժամանակավոր կացության կարգավիճակ՝ անվավեր ճանաչելով տրամադրումը մերժելու մասին որոշումը:

➤ *Ներխուժումը վերացնելը*

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել է 25 գործ, որոնցից բավարարվել է միայն 5-ը, իսկ 20-ը՝ մերժվել:

Առանձնակի ուշադրության արժանի են ներխուժումը վերացման գործերով հայցվորների կողմից ներկայացված հայցերի մերժման որոշումները: Հատկապես այն դեպքերում, երբ հայցվորի կողմից չի վիճարկվել պատասխանողի կողմից անշարժ գույքի օրինական տիրապետող լինելու հանգամանքը, դատարանը գտել է, որ որպես սեփականության պաշտպանության միջոց, յուրաքանչյուր ոք իր օրինական տիրապետման ներքո գտնվող անշարժ գույքի տարածք այլոց մուտք գործելուց զերծ պահելու համար իրավունք ունի խելամիտ պաշտպանության միջոցներ ձեռնարկել: Այսինքն, տվյալ իրավահարաբերություններում ուստիկանությունը գործում է սեփականատիրոջ անունից՝ վերջինիս օրինական տիրապետման ներքո գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքները պաշտպանելու նպատակով և իրավասու է կիրառել օրենքով իրեն վերապահված միջոցները, այդ թվում օրենքով նախատեսված ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոցներ³⁶:

Այն դեպքերում, երբ վտարման գործով եղել է նաև առանձին վեճ սեփականության տնօրինման վերաբերյալ, դատարանը ցուցաբերել է այլ մոտեցում³⁷: Մասնավորապես, *Դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում բնակարանն օրինական տիրապետողի, սույն գործով 3-րդ անձի՝ հիշյալ բնակարան ներխուժումը կանխելու մասին պահանջը ՀՀ կառավարության 10.05.2007թ. թիվ 797-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետի 3-րդ ենթակետի իմաստով օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական պայմանագրից ծագող վեճ է, քանի որ դրա հիմքում ըստ էության ընկած է հայցվորի սնանկության գործով կառավարիչ Ջ.Վ.-ի, որը գործել է պարտապան Ն.Խ. անունից, և Ա.Մ-ի լիազոր ներկայացուցիչ Թ.Մ-ի միջև կնքված և նոտարի*

³⁵ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809925213

³⁶ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937005

³⁷ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937087

կողմից վավերացված անշարժ գույքի հանձնելու մասին պայմանագիրը, որը վիճարկվում է Ն.Խ.ի կողմից ընդդեմ Ա.Ս-ի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ԵՂ/26663/02/19 քաղ. գործի շրջանակներում: Հետևաբար ՀՀ ոստիկանությունը իրավասու չէ հայցվորին դուրս բերել անշարժ գույքից:

Ներխուժումը վերացնելու հարցերով իրավահարաբերություններին ծագած հայցերով բարձրացվել են գույքի առուվաճառքի պայմանագիրը անվավեր ճանաչելու և ըստ այդմ՝ վարչական մարմնի կողմից որևէ հարկադրանքի միջոց կիրառելուց ձեռնպահ մնալու պահանջ:

Մեկ այլ դեպքում³⁸ ներկայացված հայցադիմումով ներկայացվել է, որ սնանկության գործով կառավարչի և բանկի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, ըստ որի՝ բանկը գնել է այդ բնակարանը: Պայմանագիրը ստացել է պետական գրանցում: Պատասխանող կողմը՝ ՀՀ Ոստիկանությունը առանց համապատասխան թույլտվության, որոշման կամ լիազորագրի՝ ներկայացել է նշված բնակարան և հայտնել, որ բանկի իրավահաջորդի դիմումի հիման վրա վերջինս պատրաստվում է իրականացնել ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ, ինչի առնչությամբ հայցվորը խնդրել է պարտավորեցնել պատասխանողին ձեռնպահ մնալ բնակարանի ապօրինի ներխուժումը վերացնելու և նշված բնակարանից վտարելու համար գործողություններ կատարելուց:

Հայցվորի կողմից բնակարանի առուվաճառքի պայմանագրի առկայության մասին տեղյակ չլինելու վերաբերյալ դեպքերը ուսումնասիրության ընթացքում պարբերաբար կրկնվողներից են եղել:

Մասնավորապես, դեպքերից մեկով³⁹ հայցվորը առուվաճառքի մասին տեղեկացել է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված փաստաթղթերից, որից հետո դիմել է դատարան պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջով: Իրենց հերթին ՀՀ Ոստիկանության աշխատակիցները այցելել են հայցորին և տրամադրել 20 օր ժամանակ հիշյալ բնակարանից ներխուժումը վերացնելու նպատակով: Պատասխանողը իր հերթին հրաժարվել է տրամադրել հայցվորին բնակարան այցելելու մասին արձանագրությունը, ինչի պատճառով հայցվորը դիմում է ներկայացրել արձանագրության օրինակը ստանալու համար, ինչպես նաև խնդրել է ոստիկանությանը ձեռնպահ մնալ բնակարան ներխուժումը վերացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելուց, քանի որ նույն կողմերի միջև առկա է քաղաքացիաիրավական վեճ:

Նմանատիպ դեպքերում արդեն դատարանին պահանջ է ներկայացվել որոշակի հասցեից ներխուժումը վերացնելուն/վտարելուն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասին՝ գործողության կատարման հայցի միջոցով:

³⁸ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933587

³⁹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927976

Առանձին դեպքերում դատարանը հայցը մերժել է, քանի որ Հայցվորները չեն ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ խնդրո առարկա հասցեում գտնվում են օրինական հիմքով:

Մասնավորապես, դատարանը խնդրել է հայցվորին ներկայացնել ապացուցման բեռի մաս կազմող համապատասխան ապացույցներ, մինչդեռ հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել, չի ներկայացել նախնական դատական նիստին, չի ներկայացրել որևէ միջնորդություն՝ Դատարանի կողմից սահմանված ժամկետում ապացույցները ներկայացնելու անհնարինության կապակցությամբ այլ ժամկետ սահմանելու վերաբերյալ: Դատարանն արձանագրել է, որ գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ խնդրո առարկա անշարժ գույքի սեփականատեր է հանդիսացել գործով երրորդ անձ Ա.Խ-ն: Դատարանն առանձնակի ուշադրության է արժանացնում այն հանգամանքը, որ յուրաքանչյուր դեպքում ոստիկանության կողմից կազմվել է համապատասխան արձանագրություն, այդ արձանագրությունները ստորագրվել են հայցվորի կողմից, հայցվորն ինքն է ողջամիտ ժամկետ խնդրել բնակարանն ինքնակամ ազատելու համար, արձանագրություններից որևէ մեկում չի հիշատակել Կարգի 7-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկի մասին: Նման պայմաններում Դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվորը, կրելով իր համար բարենպաստ փաստերի ապացուցման բեռը, որևէ ապացույց չի ներկայացրել՝ ՀՀ կառավարության 10.05.2007թ. թիվ 797-Ն որոշմամբ հաստատված Կարգի 7-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկի առկայության վերաբերյալ, հետևաբար, այդ հիմքերից որևէ մեկի առկայության չապացուցված լինելու պայմաններում դրա բացասական հետևանքները պետք է կրի հայցվորը⁴⁰:

Այլ խնդիրներ

Դատարանի վճիռների ուսումնասիրությունը թույլ է տվել առանձնացնել նաև պատասխանողի կողմից վարչարարության իրականացմանն առնչվող հիմնական խնդիրները, որոնց հիման վրա էլ դատարանը վճռով բավարարել է ներկայացված հայցերը:

Օրինակ, հասարակական վայրերից օգտվելու սահմանափակումների առնչությամբ վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքերով դատարանը արձանագրել է, որ որոշման մեջ պետք է ոչ միայն նկարագրվի անձի կատարած արարքը, այլ նաև պետք է նշվի օրենքի այն դրույթը կամ օրենքի հիման վրա արձակված վարչական ակտը, որով սահմանված են փողոցները, մայրերը, հրապարակները, պուրակները, զբոսայգիները, մարզադաշտերը և հասարակական այլ վայրերն օգտագործելու սահմանափակումները, այսինքն՝ այն կանոնները, որոնք խախտել է ՎԻՎ ՀՀ Օրենսգրքի 172.2-րդ հոդվածի հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկված անձը: Դատարանն արձանագրում է, որ վիճարկվող որոշմամբ ընդամենը արձանագրվել է, որ հայցվորի կողմից կատարվել է արարք՝ նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 172.2-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ հասարակական վայրերը օգտագործելու կանոնները

⁴⁰ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934483

խախտելը, մինչդեռ որոշմամբ բացահայտված չէ, թե հասարակական վայրերը օգտագործելու կոնկրետ որ կանոնները, սահմանափակումներն են խախտվել հայցվորի կողմից, չի նշվել, թե որ օրենքով կամ օրենքի հիման վրա արձակված վարչական ակտով սահմանված սահմանափակումներն են խախտվել: Նման պայմաններում Դատարանը գտել է, որ հայցվորը զրկվել է իր արդյունավետ իրավական պաշտպանությունն իրացնելու հնարավորությունից⁴¹:

Նմանատիպ խնդիր արձանագրվել է հուշարձանների և պատմամշակութային օբյեկտների պահպանության կամ օգտագործման կանոնները խախտելու դեպքով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքերում: Այսպես, դատարանը արձանագրել է, որ *պատասխանողի կողմից դատարանին չեն ներկայացվել լիազոր մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված իր լիազորությունը պատշաճ կատարելու, այն է՝ խնդրո առարկա տարածքը, որպես հուշարձան, պետական ցուցակում ընդգրկելու մասին Հայցվորին տեղեկացնելու վերաբերյալ համապատասխան ապացույցներ*: Նման պայմաններում դատարանը գտել է, որ արձանագրված արարքում բացակայել է Հայցվորի մեղքը, քանի որ վերջինս պարտավոր չէր և չէր կարող կանխատեսել իր գործողության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը⁴²:

Դատարանի վճռով հաստատված վարչարարության եւս մեկ խնդիր կապված է եղել վարչարարության ժամկետների խախտման հետ, ինչի առնչությամբ դատարանը, *վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 172.2-րդ հոդվածի, 277-րդ հոդվածի 1-ին պարբերության և 244-րդ հոդվածի նորմերը, գտել է, որ հայցը ենթակա է բավարարման, քանի որ վարչական վարույթն իրականացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված տասնհինգօրյա ժամկետի խախտմամբ, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը վերաբերում է իրավախախտումը կատարելու օրվանից մինչև վարչական տույժ նշանակելու օրն ընկած հատվածի վաղեմության վերջնաժամկետին, որը չի բացառում վաղեմության այդ ժամկետում նույն օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված վարութային ժամկետի կիրառումը⁴³:*

- *Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ գործեր*

Նշված տեսակի 5 դիտարկված գործից 3-ով հայցը բավարարվել է:

⁴¹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936435

⁴² http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938694

⁴³ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935622

Դատարանն արձանագրել է, որ ոստիկանության աշխատակիցները ժամանակին և պատշաճ ապացույցներ չեն հավաքում, որի հիման վրա էլ հիմնավորված որոշում կկայացվի՝ կիրառել միջամտություն, թե՛ ոչ: Այդպես, գործերից մեկով⁴⁴ Դատարանը գտել է, որ բռնություն կիրառելու փաստի առնչությամբ քրեական գործ հարուցելու պարագայում ոստիկանությունն առնվազն պետք է ձեռնամուխ լիներ առաջնայինը հնարավոր հանցակազմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հաստատող հանգամանքների հավաքագրմանը, որպիսի գործողության արդյունքն էլ կկանխորոշեր վարչական մարմնի իրավաչափ վարքագծի դրսևորումը, այսինքն՝ վիճարկվող որոշումը չէր ընդունվի՝ նախազգուշացում կիրառելու նախապայմանների բացակայության հիմքով:

Մեկ այլ գործով⁴⁵ Դատարանը նշել է, որ վիճարկվող որոշման բովանդակությունից միանշանակ պարզ չէ, թե տվյալ դեպքում Հայցվորի նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշման կայացման համար որն է հիմք ծառայել: Որոշման մեջ անդրադարձ էր արվել ինչպես հայցվորի կողմից շարունակական բնույթ կրող հոգեբանական բռնությանը, այնպես էլ վերջինիս նկատմամբ նախկինում նախազգուշացում կիրառված լինելու հանգամանքին: Այնուհանդերձ, որոշման մեջ նշված չէ, թե երբ է կայացվել նախազգուշացում կիրառելու մասին որոշումը, ինչն էական նշանակություն ունի օրենքի հիմքի առկայության համար: Հայցվորի կողմից ենթադրյալ բռնությունը վիճարկվող որոշման մեջ որակվել է որպես հոգեբանական բռնություն, սակայն ոստիկանության իրավասու անձը որոշման մեջ չի հիմնավորել, թե հայցվորի՝ որոշման մեջ նշված վարքագիծը հոգեբանական բռնության դրսևորման եղանակներից որին է համապատասխանում: Ավելին, ենթադրյալ բռնության դրսևորման փաստը որոշման մեջ որևէ կերպ հիմնավորված չէ: Դատարանն արձանագրել է, որ ոստիկանության իրավասու ծառայողը պարտավոր էր որոշման մեջ արտացոլել հայեցողական լիազորության կոնկրետ տեսակն ընտրելու հիմնավորումը, ինչը չի արվել: Պատճառաբանված չէ, թե ինչու է ընտրվել սահմանափակման միանգամից 3 տեսակ:

Մեկ այլ գործով⁴⁶ Դատարանն արձանագրել էր, որ բռնության փաստը հիմնավորող ապացույցները բացակայում են, բացակայում է որոշման մեջ նշված դեպքը՝ երեխային ֆիզիկական ուժեղ ցավ պատճառած լինելու փաստը հիմնավորող որևէ ապացույց:

⁴⁴ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938504

⁴⁵ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809944775

⁴⁶ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809945606

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Ղատավարական խնդիրներ

- Առանձին գործերով արձանագրվել է, որ դատական քննության նախնական փուլերում հայցվորները թարգմանչի հասանելիություն չեն ունեցել և թարգմանության հարցը ապահովել են անձնական միջոցներով:
- Վարույթին ներգրավված թարգմանիչը օտար լեզվին բավարար չի տիրապետել, ինչի արդյունքում հայցվորի փաստարկները պատասխանողին ու դատարանին պատշաճ կերպով չեն ներկայացվել:
- Պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու վերաբերյալ արձանագրային որոշումների հրապարակայնության վերաբերյալ դատավորների մոտ միասնական պրակտիկա չի գործում: Քանի որ որոշ դեպքերում այդ որոշումները հասանելի են դատալեքս տեղեկատվական համակարգում, որոշ դեպքերում՝ ոչ: Նման պրակտիկա է նկատվել նաև հայցի ապահովման միջոց կիրառելու, երրորդ անձ ներգրավելու մասին դատարանի որոշումների մասով:
- Խնդրահարույց են նաև այն դեպքերը, երբ գործով քննարկվող ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ ներկայացվում է միջնորդություն, այ մերժվում է, սակայն ինքնին միջնորդությունը հասանելի չէ, իսկ դատական ակտից հստակ չէ թե ինչ հիմքերով է այն ներկայացվել և ինչ պատճառաբանությամբ է մերժվել:
- Արագացված կարգով քննված գործերից մեկի պարագայում դատալեքսում հասանելի չի եղել տեղեկություն արագացված կարգի անցնելու հիմքի առնչությամբ:
- Ուսումնասիրված բոլոր գործերով հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո մինչև վերջնական դատական ակտ կայացնելը ընկած ժամանակահատվածը տարբեր է եղել՝ 3 ամսից մինչ 1 տարի 7 ամիս, սակայն չկա որևէ չափանիշ կամ պայման, որը թույլ է տալիս կանխորոշել և բացատրել ժամկետներն ու առկա տարբերությունները:
- Կացության կարգավիճակի տրամադրումը մերժելու գործերով բավարար հիմնավորում չեն ստանում ոչ միայն ոստիկանության կողմի կայացված որոշումները, այլ նաև դատարանի կողմից կայացվող վերջնական դատական ակտերը:
- Ուսումնասիրված դատական գործերով որոշումներն ու վճիռները թույլ են տվել արձանագրել նաև, որ մի շարք դեպքերում հայցվորների կողմից բարձրացված փաստարկները ըստ էության դատարանի կողմից բավարար անդրադարձ չեն ստացել:
- Նմանապես, դատարանը առանձին գործերով չի անդրադարձել նաև հայցվորների կողմից վարչական վարույթի ժամկետների կամ լուսմների վերաբերյալ փաստարկներին:
- Հայցվորների բարձրացրած և պատասխանողի կողմից բարձրացրած փաստարկներին անդրադառնալու պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանը

ավելի շատ ուշադրություն է դարձրել պատասխանողի կողմից ներկայացված փաստերին /հայցվորների արագայում՝ 44 գործ, պատասխանողի՝ 60/:

- Ուսումնասիրված 80 գործից 50 եւ ավել դեպքերում դատարանը չի անդրադարձել վարչական ակտին ներկայացվող ձևական պահանջները պահպանելու հարցին:
- 44 գործով դատարանը չի անդրադարձել նաև վարչական ակտի ընդունման պատճառաբանված լինելու հարցին:

Վարչարարության խնդիրներ

- Պատասխանող ոստիկանության կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու որոշում կայացնելիս, մասնավորապես հասարակական վայրերը օգտագործելու կանոնները խախտելու առնչությամբ, չեն հստակեցվել, թե կոնկրետ որ սահմանափակումներն են խախտվել, որ օրենքով սահմանված, ինչն էլ հանգեցրել է հայցվորի արդյունավետ իրավական պաշտպանությունն իրացնելու իրավունքի խախտմանը:
- Հուշարձանների և պատմամշակութային օբյեկտների պահպանության կամ օգտագործման կանոնները խախտելու առնչությամբ վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում չեն ապահովվել խնդրո առարկա տարածքը որպես հուշարձան պետական ցուցակում ընդգրկելու մասին հայցվորին տեղեկացնելու վերաբերյալ ապացույցներ: Ինչի արդյունքում հայցվորի մոտ բացակայել է մեղքը, քանի որ պարտավոր չէր և չէր կարող կանխատեսել իր գործողության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը:
- ՀՀ ոստիկանության կողմից օտարերկրացիներին կացության կարգավիճակ տրամադրելու մերժման որոշումները բավարար հիմնավորում չեն ստանում, դիմողի համար հստակ չէ, թե կոնկրետ ինչ հիմքով է դիմումը մերժվել:
- Վերոնշյալ որոշումները մեծամասամբ հենվում են ՀՀ Ազգային անվտանգության ծառայության կողմից տրվող բացասական եզրակացության վրա, ինչը սակայն կրկին բավարար հիմնավորում չի պարունակում:
- Արձանագրվել են դեպքեր, երբ ՀՀ Ոստիկանության կողմից անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության ճանապարհատրանսպորտային կանոնների խախտման համար, այն դեպքում, երբ քննարկվող նշանը փողոցում տեղադրված չի եղել: Դատարանը արձանագրել է, որ ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել ոչ թե հայցվորի մեղքով, այլ երթեւեկության ոչ պատշաճ և սխալ կազմակերպման ու ՀՀ ոստիկանության կողմից թույլ տված անգործության արդյունքում:
- Որոշ դեպքերում ՀՀ ոստիկանության կողմից կազմված վարչական պատասխանատվության ենթարկելու արձանագրությունները ստորագրված չեն եղել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հստակեցնել մշակութային հուշարձանների պահպանման և հասարակական տարածքների օգտագործման կանոնները, խախտման հիմքերն ու խախտման համար վրա հասնող պատասխանատվության տեսակները: Հանրության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ այդ կանոնների վերաբերյալ:
- Օրենսդրությամբ հստակ սահմանել փողոցները, մայրերը, հրապարակները և հասարակական այլ վայրերն օգտագործելու սահմանափակումները:
- Գործուն քայլեր ձեռնարկել ոստիկանության կողմից իրականացվող վարչարարության որակը բարձրացնելու ուղղությամբ՝ օրինակ պարբերական բնույթ կրող վերապատրաստումների միջոցով:
- Ոստիկանության աշխատակիցներին պարբերաբար ծանոթացնել ոչ պատշաճ վարչարարության հիմքով կայացված դատական ակտերին:
- Կացության կարգավիճակի տրամադրման գործերով ապահովել հիմնավորված ու պատճառաբանված որոշումների կայացում ոստիկանության կողմից:
- Նմանապես, ապահովել դատարանների կողմից միասնական պրակտիկա՝ նմանատիպ գործերով պաճառաբանված և հայցվորների համար կանխատեսելի որոշումների կայացումը:
- Ոստիկանության համար ապահովել շարունակական վերապատրաստումներ և կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ՝ ընտանեկան բռնության գործերով դեպքերի արդյունավետ վարման համար:
- Մշակել պարտադիր կատարման ենթակա կանոններ datalex տեղեկատվական համակարգում տեղադրվող որոշումների, ժամկետների վերաբերյալ, որոնք բոլոր դատավորների կողմից հնարավորինս միատեսակ կկիրառվեն: